ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1377

4484
22 10 13

21.10.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Մուտք թիվ 4085
22 10 2013թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի հոկտեմբեր ամսին այցելություն կատարելով ՀՀ ոստիակության Լոռու ՄՎ Վանաձորի ՁՊՎ, արձանագրել է, որ ՁՊՎ-ից անձանց ազատ են արձակում, առանց ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջների :

Խոսքը մասնավորապես վերաբերվում է այն հանգամանքին, որ դատախազի կողմից ներկայացվել է որոշում, խափանման միջոց կալանավորումը փոփոխելու մասին որտեղ դատախազը հանձնարարում է. << 1. *Թիվ ... քրեական գործով մեղադրյալ ... -ի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխել և վարույթն իրականացնող մարմնին հանձնարարել վեջինիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել՝ ստորագրություն չհեռանալու մասին: 2. Որոշման օրինակը ուղարկել ոստիկանության Վանաձոր քաղաքի Տարոնի բաժին վարույթն իրականացնող մարմնին և վերջինիս միջոցով մեղադրյալ ...-ին*>>:

Նշված որոշման մեջ ոչ մի տեղ չի նշվում հանձնարարություն ոստիկանության բաժնին՝ մեղադրյալին ազատ արձակելու վերաբերյալ, բայց որոշումը ոստիկանության բաժնում հիմք է ընդունվում և անձը ազատ է արձակվում: Ավելին՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից ոչ մի խափանման միջոց չի ընտրվում և հիմք է ընդունվում դատախազի որոշումը անձին ազատ արձակելու համար:

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացվածը և տալ մեկնաբանություն նշվածի վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
E-mail: info@policemonitoring.org

Ձեր 21.10.2013թ. թիվ 2621/1377 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ հոկտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տարոնի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված խախտումները ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, քննչական գլխավոր և Լոռու մարզային վարչություններում, որոնց կապակցությամբ տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնում 28.08.2013թ. ՀՀ քր. օր-ի 327-րդ հոդվածի 1-ին մասով Արմեն Մկոյանի և Ռոբերտ Ղուկասյանի նկատմամբ հարուցվել է քրեական գործ:

27.09.2013թ. և 28.09.2013թ. որոշում է կայացվել համապատասխանաբար Ռ.Ղուկասյանին ու Ա.Մկոյանին ՀՀ քր. օր-ի 327-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու, խափանման միջոց կալանավորում ընտրելու և հետախուզում հայտարարելու մասին:
Հետախուզվողներ՝ Ա.Մկոյանը 12.10.2013թ., իսկ Ռ.Ղուկասյանը 13.10.2013թ. հայտնաբերվել և նույն օրը տեղափոխվել են ոստիկանության Տարոնի բաժնի ՁՊՎ:

2013թ. հոկտեմբերի 14-ին Լոռու մարզի դատախազության դատախազ Վ.Ստեփանյանը ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 53 հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով, 145 հոդվածով, 151 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով որոշումներ է կայացրել մեղադրյալներ՝ Ա.Մկոյանի և Ռ.Ղուկասյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոփոխելու մասին և հանձնարարվել է վարույթն իրականացնող մարմնին մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել ստորագրություն չհեռանալու մասին: Որոշման օրինակներն ուղարկվել են վարույթն իրականացնող մարմնին և վերջինիս միջոցով մեղադրյալներ Ա.Մկոյանին ու Ռ.Ղուկասյանին: Նշված որոշման հիման վրա նույն օրը ժամը 18.55-ին Ա.Մկոյանը ու Ռ.Ղուկասյանը ազատ են արձակվել, իսկ վարույթն իրականացնող մարմինը 14.10.2013թ. մեղադրյալների նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Տվյալ դեպքում քրեադատավարական նորմերի խախտումներ թույլ չեն տրվել, քանի որ ՀՀ քր. դատ. օր-ի 53 հոդ. 3-րդ մասի 10-րդ կետի և 151 հոդ. 3-րդ մասի համաձայն՝ քրեական գործով մինչդատական վարույթում դատախազն իրավասու է կալանավորման ձևով դատարանի ընտրած խափանման միջոցը փոփոխել:

Հարկ է նշել, որ դատախազի կողմից ընդունված որոշման հիման վրա ՁՊՎ-ից ազատ արձակված անձանց իրավունքները չեն խախտվել :

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ